ՄՈՒԿԱԴԴԱՍԻ
(946/947 - 1000)

Շամս ալ-Դին Աբու Աբդալլահ ալ-Մուկադդասին ծնվել է Երուսաղեմում (դրանից էլ նրա Երուսաղեմացի՝ Մուկադդասի մականունը) 946/947-ին: Ճանապարհորդել է գրեթե բոլոր մահմեդական երկրներում: Իր «Ահսան ալ-Տակասիմ ֆի Մաարիֆատ ալ-Ակալիմ» (Լավագույն բաժանումները երկրամասերի (կլիմաների) ճանաչման համար) աշխարհագրական երկը շարադրել է 10-րդ դարի ութսունական թվականներին: Մահացել է մոտավորապես 1000 թվականին:

Նա, ինչպես դասական դպրոցի բոլոր աշխարհագրագետները, նկարագրել է միայն մահմեդական աշխարհը, որը նա երկու հստակ մասերի է բաժանել՝ արաբական երկրների և ոչ-արաբական (աջամ) երկրների: Երկրորդ խմբի մեջ է նաև Հայաստանը, որն «Ընդարձակ հովիտների երկրամաս» հասկացության մեջ միացվել է Առանին ու Ատրպատականին:

Թարգմանությունը կատարվել է Դե Գուեի մատենաշարի երկրորդ հրատարակությունից: Descriptio imperii Moslemici autore Al-Mokaddasi, Bibliotheca Gcographorum Arabicorum, v. III, Lugduni Batavorum, 1967.

(Տե՛ս **Крачковский**, *т. IV, стр 210-218,* **A. Miquel**, *al-Mukaddasi, (VII:492b), EOI, CD-ROM)*